

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 1-ին, կիրակի.—Գալստեան:
Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Սուքիաս աբղ. Տերտերյանը: «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց Տ. Աբրահամ վրդ. Մկրտչյանը:
Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Ապրիլի 4-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Ապրիլի 8-ին, կիրակի.—Ծաղկազարդ:
Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս վրդ. Չաքալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ովսանա Բարձրելոյն, օրհնեալ որ գայդ յանուն Տեառն» (Մարկ. ԺԱ 9) բնաբանով:
Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Ապրիլի 12-ին, հինգշաբթի.— Աւագ հինգշաբթի: Յիշատակ ընթրեաց Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:
Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Եղիշե ավագ քհն. Բաղրամյանը:

*
* *

Ապրիլի 14-ին, շաբաթ.— Աւագ շաբաթ: Ճրագալոյց Զատկի:
Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց:
Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Ապրիլի 15-ին, կիրակի.—Զատիկ: Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:
Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա օրվա մեծ տոնի առթիվ, հանդիսավոր ս. պատարագ մատուցեց Ամե-

նայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ը և «Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց:

*
* *

Ապրիլի 16-ին, երկուշաբթի.—Յիշատակ մեռելոց:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Մակար քհն. Տերտերյանը:

*
* *

Ապրիլի 22-ին, կիրակի.—Կրկնազատիկ (Նոր կիրակէ):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նարեկ քհն. Մատարյանը:

«Հայր մեր»-ից առաջ բովանդակալից քարոզ խոսեց Մայր Աթոռի դիվանապետ գերաշնորհ Տ. Ներսես արքեպս. Պոզապայլյանը՝ «Նոր խորանիդ արեգական արդարութեան նոր օրհնութիւնս տացուք և անդադար փառաւորեսցուք» (Շարական) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Ապրիլի 24-ին, երեքշաբթի.—Յիշատակ բիւրաւոր նահատակացն մերոց, որք կատարեցան յընթացս Համաշխարհային առաջին պատերազմի, յԱրևմտեան Հայաստան:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նաթան վրդ. Հովհաննիսյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ հայր սուրբը ընթերցեց Վեհափառ Հայրապետի՝ Մեծ Եղեռնի 75-ամյա տարելիցին նվիրված կոնդակը (տես էջ 6):

Հավարտ պատարագի նահատակաց հուշարձանի մոտ կատարվեց հոգեհանգիստ՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի:

*
* *

Ապրիլի 29-ին, կիրակի.—Աշխարհամատրան (Կանաչ կիրակէ):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Ստեփանոս վրդ. Զաքալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ամէն ամէն ասեմ քեզ, եթէ ոչ ոք ծնցի ի ջրոյ և ի Հոգւոյ, ոչ կարէ մտանել յարքայութիւն Աստուծոյ» (Յովհ. Գ 5) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՈՂՋՈՒՆՈՒՄ Է ՆՈՐԱԿԱԶՄ ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԽՄԲԻՆ

(19 ապրիլ, 1990 թ.)